ՍԵՂՄԱԳԻՐ
ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ

Ծրագրի շահառու կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, համայնքները (*միայն* սուբվենցիոն ծրագրի շրջանակում չներառված ջրավազանների կառուցման դեպքում), անհատ ձեռնարկատերերը:

Բաղադրիչ 1. Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում

1-ին ուղղություն – այգեհիմնում (ժամկետ մինչև 2025թ.)

0.5 (յուրաքանչյուր պտղատեսակի համար) - **500 հա** այգեհիմնում

Այգեհիմնում կարելի է կատարել հետևյալ պտղատեսակներով՝

Ծիրանենի, *դեղձենի*, *սալորենի* և *շլորենի*, *կեռասենի*, *բալենի*, *նշենի*, *նեկտարենի*, *խնձորենի*, *տանձենի*, *սերկևիլենի*, *ընկուզենի*, *տխիլենի*, *պիստակենի*, *ժորենի* (արևելյան խուրմա), *թզենի*, *նռնենի*, *շողպար* (կիվի), *խաղող* (այգու հիմնում իրականացնել միայն տեխնիկական գինեմետ սորտերով, և սորտերը նախապես համաձայնեցնել նախարարության հետ), *հատապտուղներ*:

Գնահատված ծախս 1 հա հաշվով՝ ըստ տարբեր մշակաբույսերի – **7.27-35.25 մլն դրամ** (ներառյալ առաջին տարվա խնամքի ծախսերը)

Վարկի ժամկետ – **8 տարի**

Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ - **5 տարի**

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **9 %**-ով (արտարժույթ՝ **5 %**-ով)

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **14 %**-ով (արտարժույթ՝ **8 %**-ով)՝

- սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ,
- գյուղատնտեսական կոոպերատիվներ,
- զինվորական հաշմանդամներ,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներ (18-35 տարեկան):

Այգեհիմնումը պետք է իրականացվի մեկ կապալառու կազմակերպության միջոցով (ներառյալ անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը), որը կարող է իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ ենթակապալառուների:

Ծրագրի շրջանակում 10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու կամ 10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքում շահառուն (միայն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ համայնք) կարող է ծրագիրն իրականացնել տարբեր (մեկից ավելի) կապալառու կազմակերպությունների միջոցով՝ պայմանագիր կնքելով մի քանի կապալառուների հետ (տարբեր աշխատանքների համար՝ հողային, ոռոգման արդիական կամ կարկտապաշտպան համակարգերի ներդրման, ջրավազանի կառուցման, անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերման), իսկ *անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերումը կարող է իրականացվել նաև շահառուի կողմից*՝ պայմանով, որ շահառուն պետք է ներկայացնի նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը:

Կապալառու կազմակերպությունների հետ համագործակցությունից կախված տրամադրվող վարկի կամ փոխհատուցվող գումարի չափը փոփոխության ենթակա չէ:

Կապալառուն և ենթակապալառուն պետք է լինեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ունենան տվյալ բնագավառի (ագրոնոմիական, հիդրոտեխնիկական (հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն), իսկ կարկտապաշտպան ցանց ներդնելու դեպքում՝ նաև շինարարության) համապատասխան աշխատանքն իրենց կողմից իրականացնելու համար առնվազն մեկ որակավորված աշխատող:

Շահառուն կապալառու կազմակերպության հետ պայմանագիրը պետք է կնքի վարկային կամ փոխհատուցման պայմանագիրը կնքելուց հետո:

Այգեհիմնման դեպքում թույլատրվում է 1000 խորանարդ մետր ծավալով ստորգետնյա ջրերի օգտագործման նպատակով խորքային հորերի կառուցման աշխատանքների իրականացում՝ ծրագրում ջրավազանի համար գնահատված ծախսին համապատասխան, եթե չեն գերազանցվում ծրագրով գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերը: Ընդ որում, նույն 1 հա-ի հաշվով թույլատրվում է 1000 խորանարդ մետր ջրավազանի կառուցում կամ խորքային հորերի կառուցում:
Այգեհիմնման դեպքում թույլատրվում է ժամանակակից տեխնոլոգիաներով փխրեցման իրականացում, եթե չեն գերազանցվում ծրագրով գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերը:
Եթե շահառուն իր ցանկությամբ վարկավորվել է առանց կարկտապաշտպան ցանցի այգեհիմնում կատարելու համար, ապա կարկտապաշտպան ցանցի անցկացման նպատակով լրացուցիչ վարկավորում ստանալու համար կարող է դիմել ֆինանսական կառույցին՝ շահառուի և ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից **մեկ տարվա** ընթացքում:
Ծրագրի շրջանակում **շահառուն պարտավոր է՝**
1) այգեհիմնումն իրականացնել ծրագրով նախատեսված տնկիների **նվազագույն թվից ոչ պակաս** քանակի տնկիներով (հիմնվող այգու ամբողջ մակերեսում ոչ արտադրական տարածքի (այգու եզրեր, այգեմիջյան ճանապարհներ, այգեպաշտպան շերտ, սպասարկող այլ տարածքներ) մակերեսը չպետք է գերազանցի 18 %-ը),
2) այգեհիմնումն իրականացնել **ցածրաճ** (թզուկային և կիսաթզուկային, թույլ աճող) **պատվաստակալների** վրա պատվաստված սորտերի տնկիներով (խաղողի այգիների դեպքում այս պահանջը պարտադիր չէ),
3) ապահովել (բացառությամբ կենսադինամիկ խաղողի այգու հիմնման) ջրային ռեսուրսների հասանելիությունը համաձայնեցված տվյալ տարածքը սպասարկող ջրամատակարար կազմակերպության հետ և այգիներում (բացառությամբ կենսադինամիկ խաղողի այգու) պարտադիր ներդնել **ոռոգման արդիական համակարգեր** (կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, խորքային հորի և ջրավազանների կառուցումը կամ ընդլայնումը պարտադիր չէ),
4) **այգեհիմնումն ավարտել** վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը **2 տարվա** ընթացքում (գարնանն այգետնկումը պետք է կատարվի մինչև հունիսի 1-ը, իսկ աշնանը՝ մինչև դեկտեմբերի 1-ը),
5) այգեհիմնմանը հաջորդող **3 տարիների** համար վարել **գրանցամատյան** (գրանցամատյանի օրինակելի ձևը հրապարակված է նախարարության կայքում),
6) այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո առնվազն **5 տարի չօտարել** այգին (անշարժ գույքը) և առանց նախարարության համաձայնության չծանրաբեռնել այլ իրավունքներով,
7) պտղատեսակի կամ տնկման սխեմայի **փոփոխություն** իրականացնել միայն նախարարության համաձայնությամբ,
8) ներդրվող տարածքի համար ապահովել **ջրաչափի** տեղադրում,
9) հիմնված այգու բնականոն կենսագործունեությունն ապահովելու նպատակով այգու միջբուսային և միջշարային հատվածներում իրականացնել մոլախոտային բուսականության դեմ պայքար, իսկ միջշարային հատվածներում ծածկոցային (հնձվող բուսականություն) շերտ ստեղծելու դեպքում՝ դրանց բարձրությունը չպետք է գերազանցի 25 սմ-ը,
10) ներդրված կաթիլային ոռոգման արդիական համակարգերում ապահովել կաթոցիկների (կաթոցիկների քանակը և աշխատանքային հզորությունը պետք է որոշի կապալառու կազմակերպությունը, ելնելով այգու առանձնահատկություններից) և ջրի մաքրման (ֆիլտրացիոն) համակարգի առկայությունը, իսկ ջրավազանի կառուցման դեպքում՝ ապահովել ջրավազանի պատումը գեոմեմբրանային թաղանթով (թաղանթի հաստությունն ու որակական առանձնահատկությունները որոշում է կապալառու կազմակերպությունը՝ հաշվի առնելով ջրավազանի տարողությունը)::
Այգեհիմնման դեպքում ծախսերի հաշվարկի առանձին տողերում ներառված աշխատանքների չիրականացման պայմաններում համապատասխան **ծախսերը հանվում են** ընդամենը ծախսերից: Այլ աշխատանքները ֆինանսավորման ենթակա

չեն, բացառությամբ խորքային հորերի կառուցման աշխատանքների, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաներով փխրեցման իրականացման, որը կարող է կատարվել ծրագրով հաշվարկված այլ աշխատանքների ծախսերի ***խնայողությունների*** հաշվին: Կենսադինամիկ խաղողի այգու հիմնման դեպքում հաշվարկված ջրավազանի կառուցման կամ ընդլայնման, կաթիլային ոռոգման համակարգի տեղադրման (ներառյալ պոմպակայանը) ծախսերը և ջրի վարձը հանվում են ընդամենը ծախսերից:

Ծրագրի շրջանակում տրամադրված պետական օժանդակության միջոցով **չի նախատեսվում** այգեհիմնման, մշակաբույսերի մշակման և հետագա խնամքի նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի և ինքնագնաց միջոցների ձեռքբերումը, ինչպես նաև՝ այգեհիմնման դեպքում պահանջվող խորհրդատվական ծառայության համար վճարումների կատարումը:

Այգեհիմնում կատարելու համար վարկային բաղադրիչից օգտվելու ընթացակարգ՝

ՔԱՅԼ 1

- Վարկունակության ստուգում (դիմում բանկին):

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույց ներկայացնել՝

- **Անձը հաստատող փաստաթղթի** պատճեն,
- **Կադաստրի վկայականի** պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատները**, ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործում) դեպքում՝ *նոտարական կարգով վավերացված՝* անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) **համաձայնություն** (անշարժ գույքի վարձակալության (օգտագործման) ժամկետը *չպետք է պակաս լինի **20 տարուց***՝ դիմումը ներկայացնելու օրվանից հաշված)
- Նախատեսվող ծախսերի **նախահաշիվ**,
- Խորհրդատվական ծառայություն մատուցողի հետ **պայմանագիր**,
- **Համաձայնագիր՝** ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ այլ պետական մարմնին փոխանցելու մասին,
- **Տեղեկատվություն՝** հողատարածքի տեղի, հիմնվող այգու չափերի և պտղատեսակի, տնկման բանաձևի վերաբերյալ,
- Հողի ագրոքիմիական բաղադրության լաբորատոր **փորձաքննության եզրակացության** պատճեն (առավելագույնը 6 ամսվա վաղեմության),
- Համայնքի (վարչական շրջանի) ղեկավարի կողմից հաստատված **տեղեկատվություն՝** այգեհիմնմանը նախորդող երեք տարիների ընթացքում տվյալ տարածքում մշակված մշակաբույսերի վերաբերյալ,
- համաձայնագիր՝ ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ այլ պետական մարմնին փոխանցելու մասին,
- հայտարարություն՝ ծանուցումներ ստանալու նախընտրելի եղանակի վերաբերյալ,
- Ջրավազանի կառուցման կամ ընդլայնման կամ խորքային հորերի կառուցման դեպքերում՝ **շինարարության թույլտվություն** (ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշում),
- Կենսադինամիկ խաղողի այգու հիմնման դեպքում՝ մշակության միջոցառումների **նկարագիր**,
- Խորքային հորերի կառուցման աշխատանքների դեպքում՝ նաև **ջրօգտագործման թույլտվություն** (ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում):

ՔԱՅԼ 3

Այգեհիմնման աշխատանքների ավարտից հետո ֆինանսական կառույց ներկայացնել՝

- Տնկանյութի (պիստակենու դեպքում՝ տնկանյութի կամ սերմի) ծագումն ու որակը **հավաստող փաստաթուղթ (հավաստագիր)**,
- Արտերկրից ձեռք բերված տնկանյութի բուսասանիտարական **կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ**,
- Տնկանյութի **ներկրումը հավաստող փաստաթղթեր**, իսկ տեղական արտադրության դեպքում՝ **բուսասանիտարական անձնագիր**,
- Այգեհիմնման աշխատանքների **ծախսերը հիմնավորող փաստաթղթեր**, այդ թվում՝
  - ✓ *կապալառուի* հետ կնքված **պայմանագրի պատճեն**,

- ✓ **վճարման անդորրագիր**,
- ✓ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ***հաշվարկային փաստաթուղթ***,
- ✓ ***ջրավազանի*** **Կադաստրի վկայականի** պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատներ**,
- ✓ հիմնված այգու նպատակային նշանակությանը և (կամ) գործառնական նշանակությանը կամ հողատեսքին համապատասխան **Կադաստրի վկայականի** պատճեն (պատճեններ) և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատներ**,
- ✓ անշարժ գույքի նկատմամբ *օտարման և այլ իրավունքներով ծանրաբեռնելու սահմանափակման* վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված **տեղեկանքը**,
- ✓ ***ջրօգտագործման թույլտվություն*** կամ ջրօգտագործողների ընկերության հետ կնքած պայմանագրի պատճեն,

- ➢ ձեռք բերված և ներդրված, նույնականացման կոդեր ունեցող **գույքի ցանկ**՝ իրենց կոդերով,
- ➢ կապալառուի (ենթակապալառուի)՝ տվյալ բնագավառի որակավորված աշխատող ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ կամ վկայական (հավաստագիր), աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք),
- ➢ կապալառուի կողմից տրված երաշխավորագիր այն մասին, որ ոռոգման արդիական համակարգի խողովակների համար սահմանված ճնշումն ապահովված է համակարգի խողովակաշարի ամբողջ երկարությամբ և համակարգը ենթակա է շահագործման (համակարգը կապալառուի կողմից ձեռք բերված լինելու դեպքում) հետներդրումային 4 տարիների ընթացքում,
- ➢ այն դեպքում, երբ շահառուի կողմից տարբեր (մեկից ավելի) կապալառուների հետ կնքվում են պայմանագրեր կամ շահառուի կողմից ձեռք են բերվում անհրաժեշտ միջոցները (10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու կամ 10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքերում)՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։

Բաղադրիչ 1. Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում
2-րդ ուղղություն – ոռոգման արդիական համակարգեր (կաթիլային, անձրևացմամբ և շարժական)
0.5 հա և ավելի տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի ներդրում
Գնահատված ծախս 1 հա հաշվով – **2.3 - 2.6 մլն դրամ,** ոռոգման շարժական համակարգի դեպքում՝ 1 միավորը **15.0 մլն դրամ**, 1 շահառուին՝ առավելագույնը 10 միավոր,
Վարկի ժամկետ – **4 տարի**
Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ - **մինչև 1 տարի**
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում - **12 %**-ով (արտարժույթ՝ **7 %**-ով)
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **14 %**-ով (արտարժույթ՝ **8 %**-ով)՝

- սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ,
- գյուղատնտեսական կոոպերատիվներ,
- զինվորական հաշմանդամներ,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներ (18-35 տարեկան)։

Ներդրված ոռոգման արդիական համակարգերը պետք է լինեն նոր, չշահագործված և գործարանային արտադրության։
Ոռոգման համակարգի ներդրումն իրականացվում է մեկ **կապալառու** կազմակերպության միջոցով (ներառյալ անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը), որը կարող է իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ ենթակապալառուների, բացառությամբ *ոռոգման առաջադիմական շարժական համակարգերի ձեռքբերման դեպքի*, որը կարող է իրականացվել նաև առանց կապալառու կազմակերպության։
Ծրագրի շրջանակում 10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու դեպքում շահառուն (միայն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ համայնք) կարող է ծրագիրն իրականացնել տարբեր (մեկից ավելի) կապալառու կազմակերպությունների միջոցով՝ պայմանագիր կնքելով մի քանի կապալառուների հետ (տարբեր աշխատանքների համար՝ հողային, ոռոգման արդիական համակարգերի ներդրման, ջրավազանի կառուցման, անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերման), իսկ անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերումը կարող է իրականացվել նաև շահառուի կողմից՝ պայմանով, որ շահառուն պետք է ներկայացնի նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։
Կապալառու կազմակերպությունների հետ համագործակցությունից կախված տրամադրվող վարկի կամ փոխհատուցվող գումարի չափը փոփոխության ենթակա չէ:
Կապալառուն և ենթակապալառուն պետք է լինեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ունենան հիդրոտեխնիկական (հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն) համապատասխան աշխատանքն իրենց կողմից իրականացնելու համար առնվազն մեկ որակավորված աշխատող։
Շահառուն կապալառու կազմակերպության հետ պայմանագիրը պետք է կնքի վարկային կամ փոխհատուցման պայմանագիրը կնքելուց հետո։
Ծրագրի շրջանակում **շահառուն պարտավոր է՝**

1) ապահովել ջրային ռեսուրսների **հասանելիությունը** համաձայնեցված տվյալ տարածքը սպասարկող ջրամատակարար կազմակերպության հետ,
2) ոռոգման արդիական համակարգերի ներդրումը **ավարտել** վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը **2 տարվա** ընթացքում,
3) ներդրվող տարածքի համար ապահովել **ջրաչափի** տեղադրում,
4) ապահովել ոռոգման արդիական համակարգերի շահագործումը **հետներդրումային 4 տարիների** ընթացքում (հետներդրումային

ժամանակաշրջանի սկիզբ է համարվում ներդրման աշխատանքների ավարտի օրը)։

Ոռոգման համակարգեր ներդնելու համար բաղադրիչից օգտվելու ընթացակարգ՝

ՔԱՅԼ 1

- Վարկունակության ստուգում (դիմում բանկին)։

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույց ներկայացնել՝

- **Անձը հաստատող փաստաթղթի** պատճեն,
- **Կադաստրի վկայականի** պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատները**,
- Ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործում) դեպքում՝ *նոտարական կարգով վավերացված*՝ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) **համաձայնություն** (անշարժ գույքի վարձակալության (օգտագործման) ժամկետը *չպետք է պակաս լինի **6 տարուց***՝ դիմումը ներկայացնելու օրվանից հաշված),
- **Համաձայնագիր**՝ ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ այլ պետական մարմնին փոխանցելու մասին։

ՔԱՅԼ 3

Ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերման և ներդրման աշխատանքների ավարտից հետո ֆինանսական կառույց ներկայացնել՝

- անշարժ գույքի նկատմամբ օտարման և այլ իրավունքներով ծանրաբեռնելու սահմանափակման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը,
- ձեռք բերված և ներդրված, նույնականացման կոդեր ունեցող գույքի ցանկը՝ իրենց կոդերով (պոմպի և ֆիլտրի ներդրման դեպքում՝ պարտադիր, այլ գույքի համար՝ առկայության դեպքում),
- ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերման և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված կապալառուի հետ կնքված պայմանագրի պատճենը և կատարված աշխատանքների հանձնման ընդունման ակտը (բացառությամբ ոռոգման շարժական համակարգի ձեռքբերման դեպքի),
- անկանխիկ վճարման անդորրագիրը,
- ներդրված միջոցների կամ համակարգերի անձնագիրը կամ տեխնիկական բնութագիրը,
- հաշվարկային փաստաթուղթը՝ հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր (ոռոգման շարժական համակարգի դեպքում ներկայացվում են ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթեր՝ ներմուծման հաշիվ վավերագիր կամ հարկային հաշիվ կամ ձեռքբերման հաշիվ վավերագիր կամ հարկային հաշիվ կամ այլ հաշվարկային փաստաթղթեր),
- ջրօգտագործման թույլտվությունը կամ ջրօգտագործողների ընկերության հետ կնքած պայմանագրի պատճենը, իսկ ներդրված հողատարածքը ջրօգտագործողների ընկերության սպասարկման տարածքում չգտնվելու դեպքում՝ համապատասխան տեղեկանք,
- փաստացի գործառնական նշանակությանը համապատասխան անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատները,
- կապալառուի (ենթակապալառուի)՝ տվյալ բնագավառի որակավորված աշխատող ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ կամ վկայական (հավաստագիր), աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք),
- կապալառուի կողմից տրված երաշխավորագիր այն մասին, որ ոռոգման արդիական համակարգի խողովակների համար սահմանված ճնշումն ապահովված է համակարգի խողովակաշարի ամբողջ երկարությամբ և

համակարգը ենթակա է շահագործման (համակարգը կապալառուի կողմից ձեռք բերված լինելու դեպքում) հետներդրումային 4 տարիների ընթացքում,

- այն դեպքում, երբ շահառուի կողմից տարբեր (մեկից ավելի) կապալառուների հետ կնքվում են պայմանագրեր կամ շահառուի կողմից ձեռք են բերվում անհրաժեշտ միջոցները (10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու դեպքերում)՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։

Բաղադրիչ 1. Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում
3-րդ ուղղություն – ջրավազան
Մինչև 100 հազար խմ ծավալով ջրավազանների կառուցում կամ ընդլայնում
Գնահատված ծախս 1000 խմ հաշվով – ջրավազանների կառուցում կամ ընդլայնում՝ **2.0 մլն դրամ**
Վարկի ժամկետ – **4 տարի**
Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ - **մինչև 1 տարի**
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում - **12 %**-ով (արտարժույթ՝ **7 %**-ով)
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **14 %**-ով (արտարժույթ՝ **8 %**-ով)՝

- սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ,
- գյուղատնտեսական կոոպերատիվներ,
- զինվորական հաշմանդամներ,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներ (18-35 տարեկան)։

Ջրավազանի կառուցումը կամ ընդլայնումն իրականացվում է մեկ **կապալառու** կազմակերպության միջոցով (ներառյալ անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը), որը կարող է իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ ենթակապալառուների։
Ծրագրի շրջանակում 10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքում շահառուն (միայն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ համայնք) կարող է ծրագիրը իրականացնել տարբեր (մեկից ավելի) կապալառու կազմակերպությունների միջոցով՝ պայմանագիր կնքելով մի քանի կապալառուների հետ (տարբեր աշխատանքների համար՝ հողային, ոռոգման արդիական կամ կարկտապաշտպան համակարգերի ներդրման, ջրավազանի կառուցման, անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերման), իսկ անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերումը կարող է իրականացվել նաև շահառուի կողմից, պայմանով, որ շահառուն պետք է ներկայացնի նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։
Կապալառու կազմակերպությունների հետ համագործակցությունից կախված տրամադրվող վարկի կամ փոխհատուցվող գումարի չափը փոփոխության ենթակա չէ։
Կապալառուն և ենթակապալառուն պետք է լինեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ունենան հիդրոտեխնիկական (հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն) համապատասխան աշխատանքն իրենց կողմից իրականացնելու համար առնվազն մեկ որակավորված աշխատող։
Ծրագրի շրջանակում **շահառուն պարտավոր է՝**

5) ապահովել ջրային ռեսուրսների **հասանելիությունը** համաձայնեցված տվյալ տարածքը սպասարկող ջրամատակարար կազմակերպության հետ,
6) ջրավազանի կառուցումը կամ ընդլայնումը **ավարտել** վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը **2 տարվա** ընթացքում,
7) ներդրվող տարածքի համար ապահովել **ջրաչափի** տեղադրում,
8) ապահովել ջրավազանի շահագործումը **հետներդրումային 4 տարիների** ընթացքում (հետներդրումային ժամանակաշրջանի սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների ավարտի օրը)։

Ոռոգման համակարգեր ներդնելու համար բաղադրիչից օգտվելու ընթացակարգ՝
ՔԱՅԼ 1

- Վարկունակության ստուգում (դիմում բանկին)։

ՔԱՅԼ 2
Ֆինանսական կառույց ներկայացնել՝

- **Անձը հաստատող փաստաթղթի** պատճեն,

- **Կադաստրի վկայականի** պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատները**,
- Ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործում) դեպքում՝ *նոտարական կարգով վավերացված*՝ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) **համաձայնություն** (անշարժ գույքի վարձակալության (օգտագործման) ժամկետը *չպետք է պակաս լինի **6 տարուց***՝ դիմումը ներկայացնելու օրվանից հաշված),
- **շինարարության թույլտվություն** (ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշում),
- **Համաձայնագիր**՝ ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ այլ պետական մարմնին փոխանցելու մասին։

ՔԱՅԼ 3

Շինարարական աշխատանքների ավարտից հետո ֆինանսական կառույց ներկայացնել՝

- անշարժ գույքի նկատմամբ օտարման և այլ իրավունքներով ծանրաբեռնելու սահմանափակման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը,
- ձեռք բերված և ներդրված, նույնականացման կոդեր ունեցող գույքի ցանկը՝ իրենց կոդերով (առկայության դեպքում),
- ջրավազանի կառուցման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված կապալառուի հետ կնքված պայմանագրի պատճենը և կատարված աշխատանքների հանձնման ընդունման ակտը,
- անկանխիկ վճարման անդորրագիրը,
- ներդրված միջոցների կամ համակարգերի անձնագիրը կամ տեխնիկական բնութագիրը,
- հաշվարկային փաստաթուղթը՝ հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր,
- ջրօգտագործման թույլտվությունը կամ ջրօգտագործողների ընկերության հետ կնքած պայմանագրի պատճենը, իսկ ներդրված հողատարածքը ջրօգտագործողների ընկերության սպասարկման տարածքում չգտնվելու դեպքում՝ համապատասխան տեղեկանք,
- շինարարության ավարտական ակտը (որում հստակ նշված կլինի կառուցված ջրավազանի ծավալը), իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատները,
- կապալառուի (ենթակապալառուի)՝ տվյալ բնագավառի որակավորված աշխատող ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ կամ վկայական (հավաստագիր), աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք),
- այն դեպքում, երբ շահառուի կողմից տարբեր (մեկից ավելի) կապալառուների հետ կնքվում են պայմանագրեր կամ շահառուի կողմից ձեռք են բերվում անհրաժեշտ միջոցները (10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքում)՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։

Բաղադրիչ 1. Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում

4-րդ ուղղություն – կարկտապաշտպան ցանցեր

0.5-100 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրում

Գնահատված ծախս 1 հա հաշվով **- 12.1 մլն դրամ**

Վարկի ժամկետ – **7 տարի**

Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ - **3 տարի**

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **9 %**-ով (արտարժույթ՝ **5 %**-ով)

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **14 %**-ով (արտարժույթ՝ **8 %**-ով)՝

- սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ,
- գյուղատնտեսական կոոպերատիվներ,
- զինվորական հաշմանդամներ,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներ (18-35 տարեկան)։

Կարկտապաշտպան համակարգի ներդրումն իրականացվում է մեկ **կապալառու** կազմակերպության միջոցով (ներառյալ անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը և աշխատանքների իրականացումը), որը կարող է իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել այլ ենթակապալառուների։

Ծրագրի շրջանակում 10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու կամ 10 հազար խորանարդ մետր և ավելի ծավալով ջրավազանի կառուցման դեպքում շահառուն (միայն իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ համայնք) կարող է ծրագիրն իրականացնել տարբեր (մեկից ավելի) կապալառու կազմակերպությունների միջոցով՝ պայմանագիր կնքելով մի քանի կապալառուների հետ (տարբեր նպատակներով կարկտապաշտպան համակարգերի ներդրման աշխատանքների, անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերման համար), իսկ անհրաժեշտ միջոցների (ապրանքների) ձեռքբերումը կարող է իրականացվել նաև շահառուի կողմից՝ պայմանով, որ շահառուն պետք է ներկայացնի նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։

Կապալառու կազմակերպությունների հետ համագործակցությունից կախված տրամադրվող վարկի կամ փոխհատուցվող գումարի չափը փոփոխության ենթակա չէ։

Կապալառուն և ենթակապալառուն պետք է լինեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ունենան շինարարության բնագավառի համապատասխան աշխատանքն իրենց կողմից իրականացնելու համար առնվազն մեկ որակավորված աշխատող։

Շահառուն կապալառու կազմակերպության հետ պայմանագիրը պետք է կնքի վարկային կամ փոխհատուցման պայմանագիրը կնքելուց հետո։

Ծրագրի շրջանակում **շահառուն պարտավոր է՝**

1) կարկտապաշտպան ցանցի ներդրումն **ավարտել** վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը 2 **տարվա** ընթացքում։
2) բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման աշխատանքների ավարտից հետո առնվազն **5 տարի չօտարել** ներդրված կարկտապաշտպան ցանցի հողատարածքը կամ կարկտապաշտպան համակարգը,
3) առանց նախարարության համաձայնության չծանրաբեռնել այլ իրավունքներով,
4) ապահովել կարկտապաշտպան համակարգի շահագործումը՝ հետներդրումային **5 տարվա** ընթացքում (հետներդրումային ժամանակաշրջանի սկիզբ է համարվում ներդրման աշխատանքների ավարտի օրը)։

Յուրաքանչյուր շահառուի համար սահմանված 1 հա ընդհանուր ծախսերը կգնահատվեն ոչ ավելի քան կարկտապաշտպան ցանցերի ներդրման առավելագույն սահմանաչափերն են։

Եթե շահառուն իր ցանկությամբ վարկավորվել է առանց կարկտապաշտպան ցանցի այգեհիմնում կատարելու համար, ապա կարկտապաշտպան ցանցի անցկացման նպատակով լրացուցիչ վարկավորում ստանալու համար կարող է դիմել ֆինանսական կառույցին՝ շահառուի և ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:

Կարկտապաշտպան ցանց ներդնելու համար բաղադրիչից օգտվելու ընթացակարգ՝

ՔԱՅԼ 1

Վարկունակության ստուգում (դիմում բանկին)

ՔԱՅԼ 2

Ֆինանսական կառույց ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- **Անձը հաստատող փաստաթղթի** պատճեն,
- **Կադաստրի վկայականի** պատճեն և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի **կոորդինատները**, ընդհանուր համատեղ սեփականության կամ վարձակալության (օգտագործում) դեպքում՝ նոտարակա*ն կարգով վավերացված*՝ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ (համասեփականատերերի) **համաձայնություն** (անշարժ գույքի վարձակալության (օգտագործման) ժամկետը *չպետք է պակաս լինի* **7 տարուց**՝ դիմումը ներկայացնելու օրվանից հաշված),
- **Համաձայնագիր**՝ ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները նախարարությանը կամ այլ պետական մարմնին փոխանցելու մասին:

ՔԱՅԼ 3

Կարկտապաշտպան ցանցի ներդրման աշխատանքների ավարտից հետո ֆինանսական կառույց ներկայացնել՝

- անշարժ գույքի նկատմամբ օտարման և այլ իրավունքներով ծանրաբեռնելու սահմանափակման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը,
- ձեռք բերված և ներդրված, նույնականացման կոդեր ունեցող գույքի ցանկը՝ իրենց կոդերով (առկայության դեպքում),
- ձեռքբերման և տեղակայման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված կապալառուի հետ կնքված պայմանագրի պատճենը և կատարված աշխատանքների հանձնման ընդունման ակտը,
- անկանխիկ վճարման անդորրագիրը,
- ներդրված միջոցների կամ համակարգերի անձնագիրը կամ տեխնիկական բնութագիրը,
- հաշվարկային փաստաթուղթը՝ հարկային հաշիվ կամ հաշիվ,
- փաստացի գործառնական նշանակությանը համապատասխան անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ կադաստրային քարտեզում արտացոլված հողամասի շրջադարձային կետերի կոորդինատները,
- կապալառուի (ենթակապալառուի)՝ տվյալ բնագավառի որակավորված աշխատող ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ կամ վկայական (հավաստագիր), աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ, ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք),
- կապալառուի կողմից տրված երաշխավորագիր այն մասին, որ համակարգը ենթակա է շահագործման (համակարգը կապալառուի կողմից ձեռք բերված լինելու դեպքում) հետներդրումային 5 տարիների ընթացքում,
- այն դեպքում, երբ շահառուի կողմից տարբեր (մեկից ավելի) կապալառուների հետ կնքվում են պայմանագրեր կամ շահառուի կողմից ձեռք են բերվում անհրաժեշտ միջոցները (10 հա և ավելի տարածքում ներդրում կատարելու դեպքում)՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում գրանցված և միջազգային ցանցին անդամակցող աուդիտորական կազմակերպության կողմից տրված, շահառուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական

եզրակացություն, որում պետք է արտացոլվեն ծրագրի շրջանակում կատարված ծախսերը։

Բաղադրիչ 1. Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում
5-րդ ուղղություն – բարձրարժեք մշակաբույսեր
1.0-30 հա բարձրարժեք մշակաբույսեր և հատիկաընդեղեններ
Գնահատված ծախս 1 հա հաշվով - **2.13 - 6.86 մլն դրամ** (հատիկաընդեղեններ՝ **500 000 դրամ**)
Ծրագրի շրջանակում թույլատրվում է մշակել *ծնեբեկ*, *պրասասոխ*, *ռուկոլա* (սորեկ), *բրյուսելյան* և *պեկինյան կաղամբներ*, *կոլրաբի*, *գանգրակաղամբ* (կալե), *ցուկինի* (դեղին կամ մուգ կանաչ) և *պատիսոն*, *քաղցր եգիպտացորեն*: Բացի նշվածներից, շահառուն կարող է մշակել նաև այլ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսեր՝ նախարարության համաձայնությամբ (1 հա–ի ընդհանուր ծախսի առավելագույն սահմանաչափը՝ **4.0 մլն դրամ**): Ծրագրի շրջանակում շահառուն կարող է մշակել նաև *հատիկաընդեղեն մշակաբույսեր* (1 հա–ի ընդհանուր ծախսի առավելագույն սահմանաչափը՝ **500,0 հազար դրամ**):
Վարկի ժամկետ – **2 տարի** (ծնեբեկի դեպքում՝ **5 տարի**)
Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ - **մինչև 1 տարի** (ծնեբեկի դեպքում՝ **մինչև 4 տարի**)
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **12 %**-ով (արտարժույթ՝ **7 %**-ով)
Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում **14 %**-ով (արտարժույթ՝ **8 %**-ով)՝
- սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ,
- գյուղատնտեսական կոոպերատիվներ,
- զինվորական հաշմանդամներ,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող երիտասարդներ (18-35 տարեկան):

